

Ինֆորմատիկայի և անգլերեն լեզվի միջառարկայական կապերի իրականացումը ինֆորմատիկայի ուսուցման ժամանակ

*Միրադեղյան Կարինե
Ղարազյոզյան Մարիետա
Դիլաքյան Կարինե*

Հանգուցային բառեր. ուսուցում, համակարգիչ, դպրոց, դասարան, հավելված, թարգմանություն, արտասանություն

Ինֆորմատիկայի բնագավառում գիտատեխնիկական հետազոտությունների իրականացման հիմքը ապագա հետազոտողի մոտ դրվում է դեռևս դպրոցում դասավանդվող առարկաների լավ իմացությունից: Փորձը ցույց է տալիս, որ այս առումով ինֆորմատիկայում գործածվող անգլերեն լեզվով տերմինների ոչ բավարար և ճշգրիտ իմացությունը հետագայում խոչընդոտում է այդ բնագավառում հնարավոր առաջընթացին հատկապես այն մարդկանց մոտ, ովքեր անգլերեն լեզու չեն ուսումնասիրել դեռ դպրոցում: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել խնդիրը, հասկանալ, թե ինչից է այն բխում և գտնել դրան համապատասխան լուծումներ:

Ըստ դիտարկման խնդիրը գալիս է դպրոցից:

Ինֆորմատիկայի ուսուցումը դպրոցներում պայմանավորվում է ոչ միայն դասավանդող ուսուցչի առարկայական գիտելիքների իմացությամբ, այլ նաև թեմաներում կիրառվող և ծրագրերում օգտագործվող ոչ հայերեն տերմինների արտասանությամբ:

Ըստ գործող «Ինֆորմատիկա» առարկայի ծրագրի՝ «Տվյալների հենք» թեման ուսուցանվում է 8-րդ, 9-րդ և 12-րդ դասարաններում [1; 2; 3]: Թեման իր մեջ ընդգրկում է աշխատանքային տերմիններ, որոնք գրված են անգլերեն, և նրանցից ոչ բոլորն է բառացիորեն բացատրված դասագրքում: Օրինակ՝

- ✓ *Any Part Filed* – որոնումն իրականացնել դաշտի որևէ մասում,
- ✓ *Whole Field* – որոնումն իրականացնել ամբողջ դաշտում,
- ✓ *Start of Field* – որոնումն իրականացնել նշված դաշտի սկզբում:

Հիմնականում բացատրված են նրանց կիրառման հնարավորությունները, իսկ քանի որ դասավանդող ինֆորմատիկայի ուսուցիչն ինքնաբերաբար հանդիսանում է նաև անգլերեն լեզվի բառապաշար ավելացնող, հետևաբար ուսուցիչը պետք է իմանա ոչ միայն դրանց թարգմանությունները, այլ նաև ճիշտ արտասանությունը: Այս դեպքում տեղին է նշել, որ անկախ ուսուցչի առարկային լավ տիրապետելուց, հաճախ իրենց ուսումնառության տարիների ընթացքում ոչ անգլերեն լեզու (գերմաներեն կամ ֆրանսերեն) ուսումնասիրած դասավանդողների մոտ խնդիր է հանդիսանում նշված թեմայում կիրառվող տերմինների ճիշտ արտասանությունը:

Ուսուցիչը պետք է կարողանա բացատրել օրինակ՝ «Հենքային տվյալներ» թեմայի դեկավարման Microsoft Access համակարգի հիմնական օբյեկտները, ադյուսակ ստեղծելու համար նախատեսված կառավարման տարրերը, կիրառվող

դաշտերի տիպերը, աղյուսակների միջև կապերի, աղյուսակների հարցումների, ձևերի և հաշվետվությունների ստեղծման գործընթացը: Այս ամենը հաճախ մատուցվում է լեզվական տեսանկյունից մասնագիտական տերմինների ոչ ճիշտ արտասանությամբ, որը, բնականաբար, աշակերտին կարող է շեղել նյութից և խմաստային տեսակետից ճիշտ չընկալվել: Բացի այդ, նշված տերմինների մտապահումը և օգտագործումը, ինչու ոչ, նաև արտասանությունը հանձնարարվում է նաև աշակերտներին, որը այս դեպքում բացառում է ուսուցման բարձր որակի ապահովումը:

Որոշ դասագրքերում՝ օրինակ 8-րդ դասարանի 2018թ. հրատարակության դասագրքի մեջ վերջում բերված է հավելված, որտեղ բացատրված է բառի հայատառ արտասանությունը և նրա թարգմանությունը [1, 162], (նկ.1):

Անգլերեն-հայերեն բառարան

| | | |
|----------|---------|-------------------------------|
| add | ըդ | ավելացնել |
| advanced | ըդվանսդ | առաջ քաշված, ավելի բարձր տիպի |
| align | ըլաին | շարել, հավասարվել |
| all | օլ | բոլորը |
| and | ընդ | և |
| apart | ըփատ | Առանձին, անջատ |

Նկար 1. Հավելվածի տեսքի օրինակ (8-րդ դասարան)

Ինֆորմատիկայի 9-րդ դասարանի դասագրքի [2] հավելվածում բերված է միայն անգլերեն բառի թարգմանությունը բառարանի տեսքով, իսկ նույն դասարանի էլեկտրոնային տարբերակի տեսքը, որը նույնպես կիրառվում է, բերված է նկարում (նկ. 2):

Անգլերեն-հայերեն բառարան

| | |
|------------|-------------------------------|
| about | մոտ, համարյա |
| add | ավելացնել |
| advanced | առաջ քաշված, ավելի բարձր տիպի |
| align | շարել, հավասարվել |
| all | բոլորը |
| and | և |
| apply | կիրառել, գործադրել |
| arrange | կարգավորել, դասավորել |
| background | ետին պլան, ֆոն |
| blank | դատարկ, չգրված (փաստաթուղթ) |
| blue | կապույտ |
| border | սահման, եզրագիծ |

Նկար 2. Հավելվածի օրինակ՝ (9-րդ դասարան)

12-րդ դասարանի ինֆորմատիկայի դասագրքի [3] մեջ ընդհանրապես բացակայում է հավելված բաժինը, և այս մասը վերջնական տեսքի բերված չէ: Հետևաբար անհրաժեշտ է ստեղծել հավելվածի մեկ ընդհանուր տարբերակ և մշակել բոլոր դասարաններին ու թեմաներին համապատասխան:

Որպես օրինակ բոլոր դասարանների դասագրքերում օգտագործվող հիմնական տերմինները նպատակահարմար է ներկայացնել այնպիսի աղյուսակի տեսքով, որտեղ գրված է բառի թարգմանությունը և ըստ նմանատիպ գործողությունների կատարման խմբի՝ նաև նրա կիրառման նպատակը:

Չտիրապետելով լեզվին ինֆորմատիկայի ուսուցիչը դասապրոցեսում օգտագործում է անգլերեն լեզվով բառեր և հնարավոր է թույլ տալ որոշ սխալներ: Կարծում ենք, որ տեղին է ավելացնել ծանոթագրություններ ուսուցչի համար, որոնք կթեթևացնեն ուսուցչի աշխատանքը: Առաջարկում ենք հավելվածի տակ զետեղել անգլերենի հնչյունական նշանները՝ արտասանական տարբերակները գրելով հայերեն հնչյուններով:

Օրինակ՝

[a:]-ա՛

[r]-ր

[uə]-ուր

և այլն, կամ էլ բոլոր օգտագործվող բառերը մատուցել հնչյունական նշաններով, հնարավորություն տալով ուսուցչին տիրապետել և աշակերտներին սովորեցնել դասի մեջ հանդիպող անծանոթ (անգլերեն լեզվով) բառերի ճիշտ արտասանությունը: Ի սկզբանե ճիշտ չի համարվել հնչյունական նշանների արտասանությունը ներկայացնել հայերեն հնչյուններով, բայց կարելի է շրջանցել այս կարծրատիպը, քանզի որոշ բառերի ներկայացնելը հայերեն հնչյունների միջոցով, մեծ վնաս չի հասցնի լեզվին, ավելին՝ կօգնի ուսուցչին ավելի ինքնավստահ արտաբերել օտար լեզվով բառերը և դրանք սովորեցնել աշակերտներին: Առավել ևս, երբ հայատառ արտասանության տարբերակն արդեն իսկ կիրառված է նշված 8-րդ դասարանի դասագրքում:

Օրինակ՝

Relationships [ri'leij(ə)nʃɪp] (րիլեյշնշիփ)

Date/Time ['deit/'taim] (դեյթ/թայմ)

Այսպիսով, հավելվածի անհրաժեշտությունն ակնհայտ է, և հավելվածում օգտագործվող տերմինների աղյուսակը անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ հինգ դաշտերով՝ տերմիններ, թարգմանություն, արտասանություն, տրանսկրիպցիա, կիրառման խումբ: Նշենք, որ աշակերտը տերմինները սովորում է անգլերեն, հարկադրված նայում է բառարանում, փորձում է սովորել ճիշտ արտասանությունը, իմանալ թարգմանությունը, որպիսի հետազայում ճիշտ կարողանա օգտագործել: Դա նապատում է նաև օտար լեզվի՝ կոնկրետ դեպքում անգլերեն լեզվի, բառապաշարի հարստացմանը և երբեմն մեկ, երկու բառի իմացությամբ կարողանում է հեշտ կողմնորոշվել ու ճիշտ օգտագործել համակարգիչը, միաժամանակ հմտանալ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու:

Հավելվածում աղյուսակի ներկայացման օրինակ՝

| Տերմիններ | Թարգմանություն | Արտասանություն | Տրանսկրիպցիա | Կիրառման խումբ |
|-------------------|-------------------------|-------------------|-----------------------|-------------------------------|
| Access | մուտք | ըքսես | [ˈækses] | Տվյալների հենքի պատուհան |
| Blank Database | դատարկ բլանկ | բլեյնք դեյթըբեյզ | [ˈblænk dæɪtəˈbeɪz] | |
| File Name | ֆայլի անուն | Ֆայլ նեյմ | [ˈfaɪl ˈneɪm] | |
| Create | ստեղծել | քրիեյթ | [kriːˈeɪt] | |
| Datasheet View | տվյալների թերթիկը դիտել | դեյթշեյթ վյու | [ˈdæɪtʃi:t ˈvyuː] | |
| Memo | հուշագիր | մեմրու | [meˈməʊ] | Դաշտի տվյալների տիպեր |
| Number | թիվ, համար | նամբը | [ˈnʌmbə] | |
| Date/Time | օր/ժամ | դեյթ/թայմ | [ˈdeɪt/ˈtaɪm] | |
| Currency | արժույթ | քարընսի | [ˈkʌrənsɪ] | |
| AutoNumber | ավտոմատ համարակալում | օութըու նամբը | [ˈɔ:təʊ ˈnʌmbə] | |
| Design View | դիտարկել դիզայնը | դիզայն վյու՝ | [ˈdɪzain ˈvyuː] | Աղյուսակի խմբագրման գործիքներ |
| Find | գտնել | ֆայնդ | [ˈfaɪnd] | |
| Replace | փոխարինել | րիփլեյս | [riˈpleɪs] | |
| Any Part of Field | ցանկացած մաս դաշտից | ենի փա՞թ ըվ ֆի լդ | [ˈeni pa:t əv ˈfiːld] | |
| Whole Field | Ամբողջ դաշտը | հոուլ ֆի՞լդ | [ˈhoul ˈfiːld] | |
| Start of Field | Դաշտի սկիզբը | սթա՞թ ըվ ֆի լդ | [ˈsta:t əv ˈfiːld] | |

Այս տիպի հավելվածի առկայության դեպքում ինֆորմատիայի ուսուցիչները հեշտությամբ կարող են ստուգել և ճշտել անգլերեն տերմինների արտասանությունը՝ միաժամանակ շահելով ժամանակ և պահպանելով դասավանդման ընթացքում տերմինաբանական արտասանության բարձր որակ՝ նպաստելով նաև աշակերտի կողմից տերմինի կիրառության խմբի իմացությանը: Ներկայացված կառուցվածքով աղյուսակի ներմուծումն անհրաժեշտ է կիրառել նաև դասագրքերի էլեկտրոնային տարբերակների համար:

Բացի վերը նշվածից, միաժամանակ նշենք, որ այստեղ հատկապես կարևորվում է միջառարկայական կապերի դերը: Հնարավոր չէ անգլերենի ժամանակակից ուսուցումը պատկերացնել առանց տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման, առանց համակարգչից օգտվելու: Նշենք նաև, որ օպերացիոն հա-

մակարգը և նրանում առկա կիրառական ծրագրերը համակարգիչներում հիմնականում տեղակայված են անգլերեն լեզվի տարբերակներով: Ընդ որում, արդյունավետ դասի կազմակերպման նպատակով, ինֆորմատիկա և անգլերեն դասավանդող ուսուցիչները պետք է կարողանան կիրառել ու բացատրել, ոչ միայն կոնկրետ դասի թեմային վերաբերվող տերմիններ, այլ նաև օպերացիոն համակարգում առկա առավել հաճախ գործածական բառերը: Ընդգծենք, որ ինֆորմատիկայի լաբորատորիաներից օգտվում են ոչ միայն կոնկրետ ինֆորմատիկա առարկայի դասապրոցեսի ընթացքում, այլև մյուս առարկաների ուսուցիչները ևս իրենց առարկայի առավել մատչելի և արդյունավետ ուսուցման նպատակով հաճախակի օգտվում են համակարգչային ծրագրերից: Օրինակ PowerPoint պլայդների ցուցադրման շնորհանդեսային, մուլտիմեդիոն և այլ ծրագրերով կազմվում են ցուցադրական տեսական և գործնական աշխատանքներ, լաբորատորիայում անցկացվում են բաց դասեր, որտեղ օգտագործում են համակարգչային տեխնիկայի հնարավոր միջոցները: Հետևաբար, կարող ենք փաստել, որ դպրոցում ուսուցանվող գրեթե բոլոր առարկաները միմյանց հետ կապվում են համակարգչային տեխնիկայի միջոցով:

Տերմինների, նրանց կիրառության և արտասանության վերաբերյալ համակարգչային լաբորատորիաներում կարելի է ունենալ համապատասխան պատի թերթեր, որոնք կարող են հուշող-օգնող-ուսուցանող դեր ունենալ հենց ծրագրերից օգտվելու պահին: Անհրաժեշտություն է առաջանում սերտ կապ ստեղծել օտար՝ անգլերեն լեզվի և ինֆորմատիկայի միջև:

Առաջարկվում է ինֆորմատիկայի և անգլերեն լեզվի ուսուցիչներին համատեղ դասեր անցկացնել, որը կնպաստի աշակերտի և անգլերենի իմացությանը, բառերի ճիշտ արտասանմանը, ծագումնաբանության բացատրությանը, ինչպես նաև համակարգչի վրա դրանց գործնական կիրառությանը:

Առարկաների կապը երկուստեք օգնում է հմտություններ զարգացնելուն, ինչպես նաև խթանում է դասապրոցեսում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցների կիրառմանը՝ որպես ուսուցման գործիք, և նպաստում է անգլերեն ու ինֆորմատիկա առարկաների նկատմամբ սովորողների հետաքրքրության մեծացմանը:

Անհրաժեշտ է այս գործընթացին ներգրավել նաև դպրոցում տարբեր առարկաները սպասարկող մեթոդափափորումների համագործակցությունը: Մասնավորապես ապահովել տվյալ դպրոցում ինֆորմատիկային և անգլերեն լեզվին սպասարկող մեթոդափափորումների միջև սերտ համագործակցությունը: Օրինակ՝ մեթոդափափորումների նիստերի ժամանակ ներկայացվեն այնպիսի թեմաներ, որոնք կարտահայտեն անգլերենի և ինֆորմատիկայի առարկայական կապը, թե ինչպես են համակարգչային ծրագրերն օգտագործվում անգլերեն դասի ժամանակ, հատկապես որ ծրագրերից է ավելի նպատակահարմար օգտվել և ինչու, ինչպես նաև անգլերեն լեզուն ինչպես է օգտագործվում ինֆորմատիկա առարկայի դասավանդման ժամանակ, թե ինչպիսի մոտեցումներ պետք է լինեն այս կամ այն օպերատորների իմաստային, գործածական կիրառման, դրանց խմբային ընդհանրու-

թյան, մտապահման և արտասանության արդյունավերության բարձրացման ուղղությամբ: Համագործակցությունը պետք է նախատեսի խորացված ուսուցում, որը ինֆորմատիկայի և անգլերենի ուսուցիչներին հնարավորություն կընձեռնի նշված թեմաներով իրականացնել հատուկ գործնական աշխատանքներ:

Նպատակահարմար է մեթոդափավորումները իրենց պլաններում նախատեսեն համատեղ փորձարարական դասեր, որոնց ընթացքում կկիրառվեն տեղեկատվական տեխնոլոգիաներ անգլերեն լեզվի դասապրոցեսում, կչափվի դրանց արդյունավետությունը, և կավելացվի դրանց քանակը տվյալ առարկայի ուսուցման գործում, կկազմակերպվեն համատեղ դասեր, որի ընթացքում կբացատրվի նաև, թե ինչպես է օգտագործվում այս կամ այն տերմինը: Մեթոդափավորումների աշխատանքի մեջ մտցնել դասեր, որտեղ ինֆորմատիկայի ուսուցիչը անգլերենի ուսուցչին սովորեցնի որևէ թեմա՝ կիրառելով անգլերեն տերմիններ: Անցկացնել բառային խաղերով համատեղ դասեր՝ 10 րոպե ինֆորմատիկայից, 10 րոպե անգլերենից: Տարվա ընթացքում գոնե մեկ դաս նախատեսել այսպիսի ֆորմատով ուսուցմանը: Մա կնպաստի բառերի սովորելուն՝ մոտավորապես 30-40 բառ, որոնցից մի մասը սովորողները արդեն գիտեն, ուշադրություն կդարձվի նույն արմատով բառերին, կիրառությանը ինֆորմատիկայի մեջ: Օրինակ՝

Do – կատարել, **Undo** – չեղարկել կատարված գործողությունը կամ

Copy – պատճենել, **copying – ing**-ը ցույց է տալիս, որ այդ պահին կատարվում է գործողությունը, այսինքն պատճենումը ընթացքի մեջ է:

Առաջարկվում է նաև տարբեր մեթոդափավորումների նիստերին այլ առարկաների ուսուցիչներին ծանոթացնել ինֆորմատիկայի ծրագրերից օգտվելուն, այդ նպատակով հատուկ թեմաներով հանդես գա տվյալ դպրոցի ինֆորմատիկայի ուսուցիչը, որն ուսուցանի տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու, ինչպես նաև համակարգչային տարբեր ծրագրերի ճիշտ կիրառության միջոցները: Այս դեպքում, բնականաբար, էլեկտրոնային ուսուցման ծրագրին զուգահեռ, ինֆորմատիկայի դերի ուսուցման ներկայացմամբ, ավտոմատ կերպով ուշադրություն կդարձվի նաև տերմինաբանական արտահայտություններին և դրանց արտասանությանը:

Առաջարկվում է միջին և բարձր դասարանների անգլերեն առարկայի դասագրքերում ներառել թեմաներ, որոնք կարող են ներկայացնել ինֆորմատիկայի, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներ, որը նպաստելով տերմինների ուսումնասիրությանը, կխթանի նաև դրանց յուրացումը և կիրառումը նաև ինֆորմատիկայում: Անգլերենի դասերին հնարավորինս շատ օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաները, փորձելով այդ ամենն անել առանց ուսուցչի օգնության, հաշվի առնելով, որ համակարգիչներում ծրագրերը տեղակայված են անգլերեն լեզվով: Կիրառել էլեկտրոնային գրատախտակ, որից օգտվելիս աշակերտը գտնի իր թեման որին պատրաստվել է, ներկայացնի այն PP ծրագրով, իսկ ուսուցիչը հետևի այդ գործընթացին: Նշենք, որ դա կարող է լինել որպես լրացուցիչ ինֆորմացիա՝ երկու առարկաներից որևէ թեմայի շուրջ, և միա-

Ժամանակ կարող են ներկա գտնվել ինֆորմատիկայի և անզլերենի ուսուցիչները որպես համատեղ դաս:

Կարևոր է անդրադառնալ նաև այն հանգամանքին, որ բուհերում ինֆորմատիկայի ուսուցիչ պատրաստող մասնագիտություններում հատուկ ուշադրություն դարձվի ուսանողների անզլերեն լեզվի իմացությանը, հատկապես այն սովորողների, որոնք դպրոցում ուսումնասիրել են այլ օտար լեզուներ: Մա թույլ կտա ապագայում ինֆորմատիկայի ուսուցիչը լինի ավելի ինքնավստահ և աշակերտը չի գերակայի օտար լեզվի իր իմացությամբ, որը կհավասարակշռի ուսուցիչ-աշակերտ և ուսուցում-առարկա փոխհարաբերությունները:

Կարող ենք հավաստիացնել, որ ինֆորմատիկայի և անզլերեն լեզվի միջառարկայական կապերի իրականացումը՝ նշված համալիր մեթոդների և հնարների լիակատար և համատեղ կիրառմամբ, կնպաստի ինֆորմատիկա առարկայի ուսուցման բարձր որակին ու արդյունավերության բարձրացմանը, ինչպես նաև կխթանի հետագայում աշակերտների այդ ոլորտում նորանոր գիտելիքների ձեռքբերման ձգտումներին, ինչն էլ իր հերթին կնպաստի գիտության ամենատարբեր ոլորտների զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավետիսյան Ս. Ս., Դանիելյան Ինֆորմատիկա Ս. Վ., 8-րդ դաս. Դասագիրք, Եր., Տիգրան Մեծ, 2018, 168 էջ:
2. Ավետիսյան Ս. Ս., Դանիելյան Ս. Վ., Ինֆորմատիկա, 9-րդ դաս. Դասագիրք, Եր., Տիգրան Մեծ, 2015, 160 էջ:
3. Ավետիսյան Ս. Ս., Դանիելյան Ս. Վ., Մասն. խմբ.՝ Ռ. Աղզաշյան, Ինֆորմատիկա, 12-րդ դաս. դասագիրք. հանրակրթական ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի համար, Եր., Տիգրան Մեծ, 2018, 119 էջ:

Реализация межпредметных связей информатики и английского языка при обучении информатике

*Сирадегян Каринэ
Карагезян Мариета
Дилакян Каринэ*

Резюме

Ключевые слова: обучение, компьютер, школа, класс, приложение, перевод, произношение

В статье рассматриваются вопросы, связанные с обучением терминам информатики, которые и в учебниках информатики и в современных информационных технологиях представлены на английском языке. Учитывая трудности, связанные с произношением английских слов, предлагаются несколько методов, повышающих качество преподавания. С целью повышения успеваемости и качества преподавания информатики в школе в рамках статьи предлагается добавить в учебниках информатики приложения с таблицами, которые будут иметь общую структуру, предусматривающую следующие поля: термин на английском языке, перевод на армянский язык, английское произношение слова армянскими буквами, транскрипция и применение термина в разделе. Приведен пример заполненной таблицы. Учитывая возможность проведения межпредметных связей, предлагается проведение совместных экспериментальных уроков информатики и английского языка, во время которых ученики автоматически обогатят свой словарный запас английских слов и терминов информатики. Предлагается в учебниках английского языка средней школы предусмотреть темы, которые будут связаны с темами информатики, проводить для преподавателей практические занятия, на которых преподаватели информатики будут учить конкретным темам информатики учителям английского языка и наоборот. Это будет способствовать приобретению уверенности при произношении английских слов и терминов, которые включены в учебные темы.

The Realization of Interdisciplinary Connections between IT and the English Language during IT Lessons

Siradeghyan Karine
Gharagyozyan Marieta
Dilakyan Karine

Summary

Key words: *teaching, computer, school, classroom, attachment, translation, pronunciation*

The article provides issues concerning to the terms used in English in IT textbooks while teaching Computer Science at school. Taking into account that there is difficulty for IT teachers to pronounce the terms in English, several methods are offered to help them to overcome this problem and to improve teaching. In order to improve the quality of teaching this article proposes to add special applications to the IT textbooks with the following fields: English term, Armenian translation, transcription, pronunciation written in Armenian letters and the aim of general usage. An example of chart is given in the article. As there is a possibility of interdisciplinary connections, it is proposed to conduct joint experimental lessons in the English language course and IT lessons, during which the students will automatically enrich their vocabulary of English words and terms used in IT. This kind of lessons will motivate the students to find and learn the English words used in IT lessons, and they will contribute IT teachers to gain confidence to pronounce the English words correctly while teaching Computer Science terms.